

Հ. Ա. Խ. Հ. ԼՈՒԺԴՈՎՆՈՄԱՏ
ՍՈՅ. ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԳԼՈՒ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Լ. ԿՐԱՆԵՈԳՈՐՍԿԱՅԱ

ՅԵՐԵՒԱՅԻ ՅԱՄԱՐ ԻՆՉ ՆՇԱՆԱԿՈՒ-
ԹՅՈՒՆ ՈՒՆԻ ՇՐՋԱՊԱՏՈՂՆԵՐԻ
ՈՐԻՆԱԿԸ



370.1
4-83

Պիտական Հրատարակություն
Եղբայրություն - 1928

Հ. Ս. Խ. Հ. ԿՈԽՈՂԱԿՈՄԱՏ
ՍՈՅ. ԴԱՍՏԵՍ. ԲԱԿՈՒԹՅՈՒՆ ԳԼԽ. ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

15

370-1

4-83

ԱՐ

Լ. ԿՐԱՍՆՈԳՈՐՍԿԱՅԱ

ՅԵՐԵՒԱՅԻ ՀԱՄԱՐ ԻՆՉ ՆՇԱՆԱԿՈՒ-
ԹՅՈՒՆ ՈՒՆԻ ՇՐՋԱՊԱՏՈՂՆԵՐԻ
ՈՐԻՆԱԿԸ



124 MAY 2013

45.234

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏԶԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐՔՈՒՅՑ Հ 2

ՅԵՐԵՍԱՅՅԻ ՀԱՄԱՐ ԻՆՉ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ
ՈՒՆԻ ԵՐՉԱՊԱՏՈՂՆԵՐԻ ՈՐԻՆԱԿԸ.

Մի մալը դառը սրաով գանգատվում եր
ինձ. «Ել հալ չի մնացել վրաս. Զեմ հասկանում»
ես ումն ե քաշել տղաս: Ճերը մի ծանր մարդ
եր, բերնից փիս խոսք չեր հանի, յես ել հո
լեզուս փորումս եմ պահում, իսկ տղաս ենպես
կապը կարած ե դուրս յեկել, վոր ձեռից ել
դուլ ու դադար չունենք: Յերեկ յես իրեն
խրատում եմ, իսկ ինքն ենպես մի մորով ու-
շունց տվավ, վոր աչքերս չուած մնացին»....

Յես սկսեցի մորը հարցուփորձ անել, թե
տղան վորաեղ, ինչ բանի վրա և ում հետ ե
ժամանակ անցկացնում, և բանից դուրս յեկավ,
վոր յերեխան դեռ մի տարեկան չի յեղել, վոր
հայրը մեռել ե, ինքը մալրն ել ամբողջ որն ու-
րիշի տան որավարձով բանում ե և քրոջ հետ ե
ապբում. քրոջ մարդը հարբեցող ե, շատ անգամ
կոիվ ե անում ու հայոյում:

Ելուրիշբան հարցնել հարկավոր չեր. պարզ
եր, թե այդ լավ հոր ու մոր տղան ինչու յե-
փչացած դուրս յեկել: Զե վոր նա այնքան ել

Դրառեպվար 716 թ.

հ. 615

Տիրաժ 4000

Պետհրատի յերկրորդ տպարան Յերեվանում—պ. 738

չի տեսնում, թե մալըն ինչպես ե արլուն-քըր-
տինք թափում, բայց մորաքըրոջ մարդու խայ-
տառակություններն ամեն որ տեսնում ե: Ծը-
նողները շատ անգամ զարմանում են, թե եդ
վոնց ե լինում, վոր իրենց յերեխան վոչ հոր
նտան ե դուրս գալիս, վոչ մոր. սխալն այ թե
ինչումն ե. չե վոր յերեխան պատրաստի սովո-
րություններով չի ծնվում: Խոսելու կերպը,
շարժումները, սովորությունները նա իր շրջա-
պատողներից ե վերցնում: Յեթե նա իր ժամա-
նակի մեծ մասը ծնողների հետ ե անցկացնում,
իր վարքով ել հենց դրանց ե քաշում, վորովհե-
տե դրանք ավելի մոտ են լինում իրան. յեթե
նրա վրա ուրիշներն են ազգեցություն անում,
այն ժամանակ շատ կարելի յէ, վոր նա իր սո-
վորությունները վերցնի վոչ թե ծնողներից,
այլ բոլորովին ուրիշ մարդկանցից: Որինակ,
յեթե սի հայ յերեխայի մեծացնես մի չինացի
ընտանիքում, կտեսնես, վոր նա մինչև անգամ
հայերեն չի կարող խոսել, այլ չինարեն կիմա-
նա և քիչ-քիչ ձեռք կբերի այն չինական
ընտանիքի նիստ ու կացն ու սովորությունները,
վորտեղ վոր ինքը մեծանում ե:

Բայց վորպեսզի համոզվենք, վոր յերեխան
իր վարմունքով նրանց ե նման դուրս գալիս,
ում հետ վոր շատ ե նստում, վերկենում, կա-

րիք չկա, իհարկե, հայ յերեխային Զինաստան
տանելու: Յեթե մենք հետեւնք դեռ դպրոց
չգնացող յերեխայի վարքին, կտեսնենք՝ ինչ
վոր անում ե, բոլորն ել իր շրջապատողների
արածների նմանողություն ե:

Այն բանը, վոր յերեխան ամեն ինչից որի-
նակ ե վերցնում, մեծ նշանակություն ունի
նրա զարգացման համար: Յեթե յերեխան նը-
մանվելու այդպիսի մեծ ընդունակության չունե-
նար, շատ դժվար կլիներ նրան սովորեցնել խո-
սել, իր ձեռքով ուտել, խմել, նրան շրջապա-
տող առարկաների նշանակությունը բացատրել
և նրանցից ոգտվելը սովորեցնել:

Ով շատ դիտել ե յերեխաներին ենրանց հետ
աշխատել, նա գիտե, վոր այդ հասակում դժվար
ե յերեխային խոսքով մի բան բացատրել,
անպատճառ հարկավոր ե նրան կենդանի որի-
նակով ցուց տալ: Որինակ, ինչքան ել դուք ու-
ղենաք յերեխային խոսքով հասկացնել, թե դդան
ինչպես պետք ե բռնել, յեթե նա այդ բանը
չի տեսել, և դուք ել կենդանի որինակով ցուց
չեք տվել, նա դժվար թե ձեր ասածը հասկա-
նա և կշարունակի պնակից ձեռքով ուտել, ինչ-
պես վոր սկզբում ծձկեր յերեխաներն են անում:
Յեկ մենք յուրաքանչյուր քալափոխում կարող
ենք համոզվել, թե կենդանի որինակը յերեխայի

համար վորքան ավելի համոզիչ ե ամեն մի խոսքից ու խրատից:

Յես յերկու մալր եմ ճանաչում: Յերկումն ել վեց տարեկան աղջիկ ունեն: Մեկը շատ հաճախ և շուտ-շուտ ե ասում, թե պետք ե աշխատել միշտ, թե՝ լենին այս ե ասել, այն ե ասել և ալին: Բայց մոր համար դեռ դժգար ե ձեռ քաշել հին սովորություններից, ինքը բան չի ուզում անել, ամեն ինչ գցում ե խեղճ հորաքրոջ վզին, վորի աշխատանքը նա պարզապես չի հարգում. Նրա Անյան ել նույն բանն ե անում. Հնայած վոր մայրը միշտ ասում ե, թե անհրաժեշտ ե աշխատել, աղջկա ձեռքից բան չի գալիս: Յերկորդ մայրը մի բանվորուհի յե, գյուղից նոր յեկած: Նա դեռ լավ չի կարողանում իր Մարիամին պատմել, թե լենին ինչպես եր սովորեցնում աշխատել, բայց ինքն այդ ցույց ե տալիս իր որինակով: Նա ապրում է մի բանվորուհու հետ միասին, և նրանցից ամեն մեկն իմանում ե, թե ինչ բան պետք ե անի: Մարիամը սեղանն ե պատրաստում, Մարիամի մայրը տունն ե հավաքում, իսկ մյուս բանվորուհին ընթրիքն ե պատրաստում, հետո իրանց գործը փոփոխում են, և ելի ամեն մեկն իմանում ե, թե ինչ պիտի անի: Մարիամն ել վոչ միայն իր բանն ինքն ե անում, իր մորն

ոգնում, այլև յերբ ուրիշ յերեխաների հետ ե լինում, միշտ ուրախությամբ ոգնում ե վորքերին:

Յեվ այսպես, մեզ համար պարզ ե, վոր յերեխան իր շրջապատողներին նմանվելով ե ստանում իր առաջին կենսական փորձը: Իսկ թե այդ փորձն ինչպես կլինի—այդ կախված ե նրանից, թե նա իր շրջապատողներից ինչ որինակ ե վերցնում:

Թե յերեխան ինչ որինակ ե տեսնում իր շուրջը, այդ կարելի յե հասկանալ յերեխալի վարքից:

Յերեխաներն ինչ խաղեր են անում և բնչպես են խաղում: Նրանք խաղում են այն, ինչ վոր տեսնում ու լսում են.

Յես դիտում եմ յոթ տարեկան Արային: Նրա հայրն ու մայրը բանվորներ են, շատ գիտակից: Արան յերբեմն հոր կամ մոր հետ գնում ե ակումբ կամ գործարան: Նրա սիրած բանն ե՝ բանվոր կամ կարմիր-բանակային խաղալը: Արան հանկարծ սկսում ե հարբածի նմանեցնել և այնպես լավ ե խաղում, վոր ուղղակի զարմանալի չե: Յես մտածում եմ, թե այդ վնրտեղից կարող ե վերցրած լինել: Գիտեմ, վոր Արայի վոչ հայրն ե խմող, վոչ մայրը: Ծնողների հետ խոսում եմ, բանից դուրս ե գալիս, վոր վերջերս մի նոր հարևան ե յեկել իրենց մոտ, վորն Արային

միքանի անգամ ուղարկել ե գարեջրատուն՝
գարեջուր բերելու:

Հինդ տարեկան վահանը շատ ե սիրում
«հայրիկ-մայրիկ» խաղալ: Նա աշխատում ե բա-
րեկամանալ վորեե աղջկա հետ և նրա հետ առան-
ձնանալ: Նրա ընտանիքի կենցաղի (ապրուստի)
հետ ծանոթանալով՝ տեսնում ես, վոր յերեխան
ծնողների հետ միասին ե քնում և հսարավորու-
թյուն ունի տեսնելու նրանց սեռական կյանքը:

Բայց այ, 5 տարեկան նունեն,—սա յել ե
սիրում հայրիկ-մայրիկ խաղալ, միայն թե նա
նրանց ուրիշ տեսակ ե պատկերացնում—մայրիկը
զնում ե ժողով, «Ճառ ե ասում», իսկ հայրիկը
գործի—«հրացաններ շինելու»: Աղջկա մայրը
կին-բաժնի պատգամավորուհի յէ, իսկ հայրը
զինագործարանի բանվոր:

Հիմա ասենք, թե յերեխաներն ինչի մասին
են խոսում և ինչպես են խոսում: Նրանք խո-
սում են իրենց տեսած բաների մասին, և նրանց
խոսեն այնպես ե, ինչպես վոր իրենք լսում են
իրենց շուրջը:

5 տարեկան Արամն ընկերների հետ սովո-
րաբար գոռզոռում ե և կոպիտ ե, հայրոյում ե
ամենախայտառակ խոսքերով և սովորաբար այ
թե ինչ ե պատմում. «Յերեկ մեր քափորակինը
մեզ մոտ եր... արագ ելինք կոնծում... թունդ...

ե՝ խմենք... խմենք... խմիր, հերն անիծած,
մինչեւ տակը...»: Ուրիշ բանի մասին կարգին
պատճել նա չի կարող ուրիշ բանով չի յել
հետաքրքր վում: Նա տանը մի լավ քաղցր խոսք
համարյա չի լսում, նրանց տանը շատ անգամ ե
կոնծաբանություն լինում, այդտեղ ել նա սովո
րում ե հայրոյն ու կոպիտ վարգել:

Բայց այ, Մուկուչը. նայել հինգ տարեկան ե,
նա բոլորովին ուրիշ բանի մասին ե խոսում. «Մեր
կարոն ինձ տարավ պիսներական տունը,—պատ-
ճում ե նա իր ընկերներին,—լենինի մահվան
տարեղարձն եր յեշկու պիսներ պահ սկ ելին
կանգնած, պատվավոր պահակ, ուղիղ, ձզված,
տեղներից չելին շարժվում, վանց վոր մահեծ
մորդիկ»... և այլն: Նա խոսում ե հանգիստ, կա-
պակցված, ազատ: Մինչեւ անգամ նա վ առան-
փորի պես մի/բան ե հնարել.

Լենինը մեռավ, նրան թաղեցին,
վոր նրան թաղեցին,
նա քնեց խոր քնով մշտական:
Յեկ մեր լենինին ել չենք տեսնելու
հավիտյան:

Տանը յերեխայի մոտ հայրն ու մայրն աշ-
խատում են հանգիստ խոսել, միշտ հետեւում են
իրենց խոսակցությանը և աշխատում են, վոր
յերեխան կոպիտ խոսք ու հայրոյանք չլսի,

յերեեմն այն գըքուկներն ու վոտանավորներն են կարդում, վոր մանկապարտիզում տալիս են յերեխաներին:

Յերեխաներն ինչ սովորություններ են ձեռք բերում: Այն սովորություններն, ինչ վոր տեսնում են իրենց շրջապատողներից:

Յեթե տանը հետեւում են մաքրության ու կարգ ու կանոնի, յերեխաներն ել ճշտապահություն են սովորում և առողջապահական սովորություններ են ձեռք բերում, բայց հենց վոր տանը կեղտոտություն ու անկարգություն յեղավ, ել դժվար բան ե յերեխային ճշտապահություն ու մաքրություն սովորեցնելը:

Վերջերս յես դիտեցի յերկու յերեխայի, վորոնք նոր ելին մտել մանկապարտեզ: Յերկուսն ել 6 տարեկան:

Թամարան մեծ «մաքրասեր» ե, ինչպես նրան անվանում են. առանց ձեռները լվանալունա յերբեք սեղան չի նստիլ և արտաքնոց գնալուց հետո յել չի մոռանում ձեռները լվանալ, լվանում ե կարգին ու յերկար: Նա յերբեք ուրիշ սրբիչով չի սրբում, ուրիշ ամանից չի ուտում, թեկուզ միքիչ կեղտոտ շոր չի հագնում: Որպահ յեղած ժամանակ հաճույքով լվանում ե սեղանի պաստառը (կլեննկան), լվացարանը, առաջինն ե լինում, վոր հիշեցնում ե, թե հա-

տակին պետք ե թաց փայտի թեփ շաղ տալ: Թամարի մաքրը բանվորուհի լէ, շատ մաքրասեր և ճշտապահ մի կին ե: Աղջիկը նրա մոտ քնում ե առանձին անկողնում, առանձին պնակ ու բաժակ ունի: Մայրը միշտ որինակելի մաքուր ե հագնվում և նույնպես ել աղջկան ե հազցնում:

Բայց տեսեք, վոր Վարդգեսին, ընդհակառակը, շատ գժվար ե կարգ ու կանոն սովորեցնել: Զեռները լվանալու համար հարկավոր ե նրան դեռ համոզել: Իր սրբիչը չի ճանաչում և ամենից շատ ե կեղտոտում, իր կերած-թափածը չի ուզում հավաքել, արտաքնօցն անպատճառ կեղտոտում ե:

Վարդգեսենց տանը միշտ անկարգություն ե տիրում զիշերվա բեֆերից հետո, ժամանակ չեն ունենում մինչև անգամ անկողինները կարգի բերելու: Վարդգեսն ուտում, խմում, քնում ե՝ ում հետ վոր պատահում ե, կամ մոր հետ, կամ հոր հետ կամ մի ուրիշի հետ:

Այդպես ել աշխատանքի մեջ ե: Յերեխան հենց վոր տեսնում ե, վոր իր շուրջն աշխատում են և ամեն մեկն իր գործը բարեխզնությամբ ե կատարում, ինքն ել ե սովորում հարգել աշխատանքը և իր ուժերը ներածին չափ աշխատանքին մասնակցություն ունենալ:

Միտս ե գալիս յոթ տարեկան Կատյան։
Ինձ միշտ զարմանք եր պատճառում այն կենա-
րոնացած լրջությունն ու ճարպկությունը, վորով
նա կատարում ե տնտեսության մեջ իր աշխա-
տանքը։ Բացի դրանից, նա արգեն կարողանում
է ունդակել, սղոցել և իր փոքրիկ յեղբոր հա-
մար ինքն ե խաղալիքներ շինում։ Յերբ նա յե-
րեխաների հետ ե լինում, նա հաճույքով և
ուրախությամբ ոգնում ե փրբերին։

Կատյայի հայրը բանվոր ե, ատաղձագործ,
գործը շատ անգամ տանն ե անում։ Մայրը շատ
ճշտապահ և աշխատասեր կին ե, Կատյան ել,
վորպես մեծը, նրան ոգնում ե տան գործերում։
Տանը Կատյան վոչ մի խոսք ու զրույց չի լսում,
թե ով ինչ պիտի անի. ամեն մեկն գործը սուս
ու փուս և բարեխղճաբար կատարում ե։ Բացի
դրանից, աղջիկը մինչև վեց տարեկան հասակը
գյուղում ե ապրել, շատ բան ե տնտղել ու
տեսել, թե գյուղացիներն ինչպես են աշխա-
տում դաշտում ու տանը։

Բայց յերբ վոր մի ընտանիքում յերեխան
տեսնում ե, վոր ամբողջ գործը մեկի վզին են
գցում, ինչպես, որինակ, Անյայի ընտանիքում,
ուր ամբողջ աշխատանքը հորաքույրն ե կատա-
րում, կամ թե բոլորն ել անփուլթ են վերա-
բերվում դեպի աշխատանքը, և յերեխան ավելի

շատ անխելացի պարապություն ե տեսնում,
ինչպես տեսնում ենք Վարդգեսի ընտանիքում,
յերեխաները սովորում են պարապարապ ման
գալ և իրենց գործն ուրիշի վրա գցել։

Այսպես, Անյայի վրա կատարած դիտողու-
թյունները, վորոնց մասին վերը խոսեցինք, ցույց
են տալիս, վոր նա ամենին չեւ սիրում աշխա-
տել և իր ընկերուհիների հետ յեղած ժամանակ
միանգամայն անձարակ ե և միշտ աչքն ուրիշնե-
րի վրա յեւ, վոր իր համար մի բան անեն։ Իսկ
Վարդգեսը, նա հան վոչ միայն աշխատելու սո-
վորություն չունի, այլև նա այնպես ե սովորել
անկարգություն, վոր պարզապես ձգտում ե ու-
րիշների արածը բանդել, կոտրաել, այսինքն
նշանակում ե՝ դեպի ուրիշի աշխատանքը վոչ
մի հարգանք չունի։

Ոյս կամ այն հարաբերությունը, կոլլեկախ-
վում ապրելու և աշխատելու կարողությունը
յերեխան փոխ ե առնում նույնպես շրջապա-
տողներից։ Յեթե յերեխայի մոտ ամենքը սի-
րով են ապրում, ուրախությամբ իրար ոգնում
են և իրենց ուժերը ներածին չափ մասնակ-
ցություն են ունենում հասարակական շինարա-
բության մեջ, այն ժամանակ յերեխան ել կոլ-
լեկտիվիստ ե մեծանում։

Մի մանկապարտիզում յես հաճախ դիտել

Եմ Ցոլակ անունով վեց տարեկան մի տղալի։
Ինձ գրավում եր այն, վոր նա կարողանում ե
իր շուրջը համախմբելով՝ կազմակերպել իր ըն-
կերներին, դեպի վորոնց նա միշտ բարչացակամ
վերաբերմունք ունի, և նրա վարքի յուշաքան-
չչուր ժանրամանության մեջ կոլեկտիվիզմի
զգացմունք ե յերեռում։ Հենց վոր տանից մի
բան ե բերում, անպատճառ բաժանում ե բոլորի
մեջ. յեթե կոլեկտիվ աշխատանքների համար
ընկերներին մի բան պակասում ե, նա իր հորն
ե դիմում՝ խնդրելով ողնել այդ խմբին։ Յերբ
մանկապարտիզում ծնողների ժողով ե լինում,
յերեխան համառորեն հիշեցնում ե հորը, թե
պետք ե ժողով գնալ։

Ցոլակն ապրում ե հոր ու տատի՝ մոտ։ Ցո-
լակի հայրը շատ հասարակական մարդ ե. նա
միշտ ուշադրություն ե դարձնում այն կոլեկ-
տիվի վրա, վորտեղ իր յերեխան ե լինում, և
սիրով ոզնում ե այդ կոլեկտիվին։ Տատիկն ել
շատ ուշադիր ե դեպի թոռան ընկերները։ Ըն-
տանիքում վոչ մի անբավականություն չի լի-
նում։ Բացի դրանից, հայրը յերեխային յերբեմն
իր հետ տանում ե իր հասարակական յելույթ-
ներին և միշտ կարեորություն ե տալիս այն
խորհուրդներին, վոր նրան տալիս են մանկա-
պարտիզում իր յերեխայի ընտանեկան դաստիա-
րակության վերաբերմամբ։

Դե, իհարկե, յեթե յերեխան իր շուրջը
մանը սեփականության, անհասարակայնության,
հեռու մնալու որինակներ ե տեսնում, ինքն ել
նույն սովորություններն ե ձեռք բերում։

Հենց նույն խմբում, վորտեղ Ցոլակն ե,
յես դիտել եմ մի ուրիշ յերեխայի։ Նա միշտ
մենակ ե։ Ուրիշների հետ խաղաղ ու աշխատել
չի սիրում։ Յերբ վոր նրան մի բան են տալիս,
նա աշխատում ե թագնվել և մենակ ուտել, վոր-
պեսզի ուրիշներին բաժին չտա։ Ընկերներին դի-
մում ե այն ժամանակ միայն, յերբ հարկավոր
ե մի բան խնդրել կամ փոխել, և խնդրելու ու
փոխելու այդ սովորությունով նա խիստ ջոկնր-
վում ե մյուս յերեխաներից։ Ընկերները նրան
չեն սիրում և խույս են տալիս նրանից։

Գուրգինը հայր չունի։ Մայրը մոռալ և ու-
րիշներից խույս տվող մի կին ե, իր տղային
միշտ ջոկում ե ուրիշ յերեխաներից, աշխատում
ե նրան ծածուկ քաղցրավենիք տալ այնպես, վոր
ուրիշներին ստիպված չլինի բաժին տալ Բացի
դրանից, նրանցից վոչ հեռու ապրում ե իրենց
ազգականուհին, վորը պարապում ե իրեր ծա-
խելով և փոխելով։

Յերեխաներն անպայման իրենց շրջապա-
տողներից են վերցնում բոլոր սովորություններն ու
նախապաշարումները։

Այժմ սնոտիապաշտությունները վերանում
են արդեն, բայց զեռ ամեն ահղ վոչ մի ա-
տեսակ: Մի գավառական մանկապարտիզում մի
անգամ յեւ վկա յեղս յերեխաների մեջ տեղի
ունեցող մի այսպիսի վեճի: Յերեխաները նըս-
տել են սեղանի շուրջը: Ոհանիկն սկսեց հացից
դնդակներ շինել, իսկ Մարգոն բարկացած փընթ-
փընթաց.

—Այ, յերբ ասոված հացդ կլսլի, կթողնի
քեզ սոված, են ժամանակ քեզ կասեմ:

—Հացն ասոված հա չի տալիս, բնությու-
նըն ե տալիս, —հանդիստ պատասխանեց Ոհա-
նիկը:

—Վհնց թե բնությունն ե տալիս, սնւտ ե,
ասոված ե տալիս, —համառությամբ պնդում եր
Մարգոն: —ամեն բան նա յե տալիս:

—Զե՞ւ, տվողն ասոված չի, այլ բանվորնե-
րը, նրանք են ամեն բան անում: Նրանք աշ-
խատում են, իսկ բնությունը դրա համար ցորեն
բուցնում:

—Ի՞նչ ես գուրս տալիս, ասոված քեզ կըս-
պանի դրա համար, —վախեցավ Մարգոն:

—Յես իսկի յել չեմ վախում, —շարունա-
կում եր Ոհանիկը: —Ասովածս վորն ե, եղ բո-
լորը հին մարդիկն են հնարել:

Մարգոն նոր ե յեկել մանկապարտեղ: Հայր


ու մայր չունի: Նա ապրում ե նախապաշարված
տատի հետ, վորը նրան «աստվածապաշտ» ե
դաստիարակում:

Իսկ Ոհանիկի հայրը մի բանվոր ե, վորը
հիշում ե, թե իննարյուր հինգ թվականին ինչ-
պես իրանք աստծու վրա ելին դրել իրենց
հույսը, հավատացել և խնդրել ելին, բայց մեղջը-
ներնին գնդակներ ոտացան միայն: Նա գիտե,
վոր աստծու հրաշքով յերեք վոչինչ չի տրվել,
այդ մասին գիտե և իր վորդին:

Այնպիսի ընտանիքներ ել կան, վորտեղ բո-
լոր սովորությունները հինն են: Հին ձեռվ հար-
սանիք են անում, կնունք են անում, առաջվա-
նման զատիկը ծնունդ են կատարում:

Իսկ հեղափոխական տոներն, եհ, դրանք
«խորհրդացին» են, տոնելու հարկ չկա: Այդ ըն-
տանեկան և յեկեղեցական տոներին ընտանիք-
ներում հաճախ հարբուժ են, քեֆ են անում, և
յերեխան սովորում ե կարծել, թե այդ բոլորն
այդպես ել պետք ե. չե՞ վոր նրա աչքում հայրն
ու մայրն ամենամեծ հեղինակությունն են: Թե
վսասակար և թե վոչ-հասարակական բան ե դուրս
գալիս. չե՞ վոր յերեխան տոնելով՝ որինակի հա-
մար՝ զատիկը և չընդունելով մալիսի 1-ը, յերբ
ամբողջ աշխարհի պրոլետարիատն ե միանում, —
արդեն մանկությունից կարփաւմ: Եհ սմայնական
միությունից:

ՀԵ 38



Հիշում եմ, հենց նույն Մարգոն մանկապարտեղ յեկավ զատկական տոներին՝ զարդարված, տոնական հագուստով, թաշկինակում ներկած ձու։ Նա «հյուր» եր յեկել տեսնելու, թե տղերքն ինչ են անում։ Իսկ տղերքը պատրաստում են մայիսի 1-ի համար, աշխատում են բոլորը, բանվորների համար ընծաներ են պատրաստում։

— Եղ ի՞նչ եր անում, տո՞ն ե, ի՞նչ ե, — նկատում ե Մարգոն։

— Տոնը մայիսի 1-ին կլինի, — պատասխանեցին յերեխաները։

— Եհ, են ժամանակ «խորհրդավին» կլինի, իսկ հիմիկվանն ավելի մեծ ե։

— Զե, են ժամանակվանն ե մեծ, — մեջ ընկավ Ոհանիկը։ — Են ժամանակ բոլոր բանվորներն ու բոլոր գուղացիներն ու բոլոր յերեխաներն ամբողջ աշխարհում տոնելու լեն։

Վերը բերած բոլոր որինակները միանգամ ևս ցույց են տալիս, վոր յերեխան հայելու նըման իր գործողություններում արտացոլում ե այն բոլորն, ինչ վոր տեսնում ու լսում ե։

Իսկ վոր գլխավորն ե, այդ անհետեանք չի անցնում նրա հետագա կյանքի համար։ Մանկագիտությունը մեզ ասում ե, վոր ծննդից մինչև 7 տարեկան հասակը յերեխայի ապագա զար-

գացման համար վճռական նշանակություն ունի։ Այն, ինչ վոր յերեխան ստանում ե այդ հասակում, ազգում ե նրա ամբողջ հետագա կյանքի վրա։ Իզուր չե, վոր ծեր մարդիկ միշտ հիշում են հենց այն, ինչ վոր յեղել ե վաղ մանկության որերում։

Հաճախ ենք պատահում հասակավոր մարդկանց, վորոնք ըստ յերեսութին կարող ելին ապրել ավելի մաքուր, ավելի լավ, բայց նրանք մընում են փնթի, առողջապահական կանոնների վերաբերմամբ, և յերբ փորձում են իմանալ նրանց անցլալը, բանից դուրս ե գալիս, վոր նրանք այդ բանին սովորել են մանկությունից և ալժմ ել շարունակում են նույն անել ըստ սովորության։

Իսկ անուղղա հարբեցողները, վորոնք վոչ մի կերպ չեն կարող իրենց փոխել, վորոնց մասին ասում են, թե այդ «ժառանգական» ե։ Արդյոք նրանք այն պատճառով չեն անուղղելի, վոր մասկությունից սովորել են կարծել, թե այդ հենց ալդպես ել հարկավոր ե, սովորել են տեսնել և ճանաչել հենց այդ բանը։ Արդյոք դրանից ե, վոր կյանքում լինում են ալպես կոչված «բախտ չունեցողներ», վոր նրանք մասկության ժամանակ այն չեն սովորել, ինչ վոր պետք ե։ Փորձեցնք պատկերացնել այն յերեխայի ապա-

գան, վորը մանկությունից սովորել ե բանն ու-
րիշի վրա գցել, «խոզ» ե մեծացել և չի սովո-
րել կոլեկտիվում ապրել ու աշխատել. ԶԵ վոր
հաստատապես կարելի յէ ասել, վոր նրա հա-
մար շատ դժվար կլինի հարմարվել մեր ժա-
մանակակից հասարակության մեջ, ուր յուրա-
քանչյուրը պարտավոր ե ամենագործոն մաս-
նակցություն ունենալ հասարակական շինարա-
րությանը:

Իսկ մանկությունից մեծահասակների մնո-
տիապաշտություններին սովորած մանուկները:

Յերեակայեցեք մի յերեխա, վոր մանկու-
թյունից սովոր ե կարծել, թե կան հրաշքներ,
կան բարի վոգիներ, վորոնք վարձատրում են
հնազանդ և խաղաղ յերեխաներին, վոր կա մի
աստված, վոր բոլորի մասին հոգում ե: Յերե-
խան մեծանում ե և միշտ կարծում, թե բավա-
կան ե վոր նա սուսուփուս նստի, աստված
նրա համար ամեն ինչ կպատրաստի: Հետո կյան-
քը նրան ցուց կտա, վոր նրան միմիայն խա-
ռել են, վոր հեղության համար վոչինչ չենտա-
լիս ու չեն տվել, այլ ամեն բան ձեռք ե բերվում
միայն կովով, միությամբ և աշխատանքով: Յեկ
յեթե յերեխան այդ մասին ուշ կիմանա, կյան-
քում նա «բախտ չունեցող» դուրս կգա, վորով-
հետեւ նրա համար դժվար կլինի ել իրեն փոխել:

Մալրն ի՞նչ պետք ե անի, վոր յերեխան
իր առաջ տեսնի հենց այնպիսի որինակներ, վո-
րոնք հարկավոր են նրա կանոնավոր զարգաց-
ման համար:

Իհարկե, յուրաքանչյուր մայր ամենից ա-
ռաջ պետք ե հոգա այն մասին, վոր այն հիմ-
նարկության կամ գործարանի մեջ, վորտեղ ին-
քն աշխատում ե, մանկապարտեզ լինի, վորի մեջ
յերեխան կարողանա կանոնավոր հասարակական
դաստիարակություն ստանալ:

Բայց ամեն յերեխա մանկապարտեզ չի ընկ-
նում. թե ընկնում ել ե, միևնույն ե, նա իր
ժամանակի մեծ մասը տանն ե անցկացնում, և
յեթե մայրն ինքը չի հոգում այն մասին, վոր յե-
րեխան վատ որինակներ չտեսնի, միևնույն ե,
այդ որինակները յերեխայի վրա իրենց ազդե-
ցությունն են անելու, և մանկապարտիզի համար
դժվար ե լինելու դրանց գեմ պալքարելը:

Նշանակում ե՝ հարկավոր ե վոր ծնողներն
իրենք հետեւեն, թե ուր ե գնում իրենց յերե-
խան, ինչ ե տեսնելու նա այնտեղ, և այդ ոգ-
տական ե արդյոք նրա համար, իսկ վոր գլխա-
վորն ե՝ հետեւեն հենց իրենց, վոր յերեխային
այնպիսի որինակներ չտան, վորոնք կարող են
նրան մնասել:

Իսկ դրա համար ծնողներին անհրաժեշտ ե

գիտակցել, թե յերեխան ինչպես պետք ե մեծանա, վոր կյանքի համար պատրաստված լինի:

Յերեխաներին հին ձեռվ դաստիարակել արդեն չենք կարող, իսկ նորը հասկանալու համար հարկավոր ե մասնակցություն ունենալ նոր հասարակական կյանքի կառուցմանը, պետք ե տաննել հիսը վերափոխել նորով, այն ժամանակ ինքն իրան զուրս կդա, վոր յերեխան շրջապատողներին նմանվելով՝ ինչպես հարկն ե կպատրաստվեապագայի համար:

Այս, որինակ մոր մոտ ե գալիս, ասենք, մի ուրիշ բանվորուհի: Յեթե մայրը հասարակական մարդ ե, նրանց խոսակցությունն ել կուսակցական կլինի, իսկ յեթե վոչ, կըկսկեն հասարականերն ու ուրիշներին քննադատելը, իսկ յերեխան այս բոլորն իր մեջ կտպագորի:

Հասարակական կցանքով ապրող մարդը հասկանում ե, վոր ընկերների մեջ յերեխայի բուռը ծածուկ քաղցրավենիք չի դնի, այլ իր որինակով ցուց կտա, թե ինչպես պետք ե միասիրտ ապրել ու աշխատել ընկերների հետ:

Բանվորական ընտանիքում, ուր հայրն ու մայրն զբաղված են հասարակական աշխատանքով, մտածում են հասարակական շինարարության մասին, յերեխան դատարկ քեֆեր, հայնունքներ, չի տեսել ու չել լսել: Այդպիսի ընտա-

նիքում ինքնըստինքյան թե տնտեսական և թե հասարակական աշխատանքը բաժանվում է բոլոր անդամների մեջ, և յերեխայի մեջ կոլեկտիվի հանդեպ ունեցած պարագի զգացում ե պատվաստվում. ծնողները յերեխային չեն տանի նրա համար անհամապատասխան և վնասակար հանդեսներ, ինչպես, որինակ, կրկեսնե (ցիրկը), գարեջրատներն են և այն, այլ նաև ցուց կտան նրան, թե իրենք ինչպես են աշխատում (ի հարկե, յեթե յերեխայի առողջության համար վնասակար արտադրություն չի այդ և յերեխային չի հոգնեցնի), կծանոթացնեն ակումբին և ընթերցարանին, ուր սովորում և հանգստանում են, իսկ այդ կողնի յերեխայի մեջ գեպի աշխատանքը հարգանք պատվաստելուն, բանվորական ուժերի միության նշանակությունը գիտակցելուն: Հասարակական ծնողները յերեխային չեն տանի յեկեղեցի կրօնական տոներին անցյալի թախծոտ յերգասացությունները լսելու: Նրանք յերեխային կտանեն հեղափոխության տոնին, ուր հընչում են հզոր հիմները, վորոնք պայքարի և հաղթության են կոչում, և յեթե ծնողներն այդ բանի մեջ չափավոր կլինեն և յերեխային չեն հոգնեցնի, այն ժամանակ այդ նրան առողջ վառ ուրախություն կտա նրան կսովորեցնի զզալ և սիրել հեղափոխությունը:

4084

Սովորեցնել, թե այս կամ այն դեպքում ինչ-
պես պետք ե վարգել, առանց յերեխաներին ու
ծնողներին ճանաչելու, իհարկե՛ դժվար ե. դրա
համար ամեն մի առանձին դեպքում պետք ե դի-
մել մոտակա մանկապարտեզը, և այնտեղ վա-
րիչը, բժիշկը կամ դեկավարն ուրախությամբ
խորհուրդներ կտան, իսկ առաջմ անկասկած ե
մի բան. ծնողներն իրավունք չունեն և պետք
չե յերեխային իրենց յետեից քարշ տան յետ,
թեկուղ տլդ «յետ»-ը (սովորությունները, ծե-
սերը) իրենց համար նույնիսկ ըստ սովորության
թանգ ել լինի. այդ անխուսափելիորեն շատ ա-
վելորդ դժվարություններ ու խոչընդոտներ կըս-
տեղծի յերեխայի համար իր կյանքուժ:

Այստեղ միայն մի յելք կա. յեթե ծնողները
ցանկանում են, վոր իրնց յերեխան «բախտ
չունեցող» չգառնա, պետք ե վոր իրանք գնան
և յերեխային առաջնորդեն դեպի նոր կենցաղի
կառուցումը. այսպիսով միայն կարող ենք մեր
յերեխաներին այնպիսի որինակ տալ, վոր նրան-
ցից նոր՝ կոմմունիստական հասարակության ա-
պագա կառուցողներ դաստիարակվեն:



<<Ազգային գրադարան



NL0212941

45.234



ԳԻՆԵ 10 ԿՈԴ.